ԼԻԼԻԹ ԲԱԲԱՅԱՆ
Երևանի №155 դպրոցի հայոց լեզվի և
գրականության ուսուցչուհի
lilitbabayan0305@gmail.com

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈԽԱՆԶԱԴՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ «ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ» ՎԵՊՈՒՄ

(Օգնություն ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսուցիչներին)

Բանալի բառեր և արտահայտություններ. Սպարապետ, պայքար, պատմավեպ, Գոհար, Սաթենիկ, հայրենասիրություն, տարածություն և ժամանակ:

Ключевые слова и выражения: Спарапет, борьба, исторический роман, Гоар, Сатеник, патриотизм, пространство и время.

Keywords and expressions: Sparapet, struggle, historical novel, Goar, Satenik, patriotism, space, time.

Նախաբան

Պատմության թեմային իր ստեղծագործական ճանապարհի տարբեր հանգրվաններում Սերո Խանզադյանն անդրադարձել է տարբեր ժանրերի ստեղծագործություններով՝ «Վարք հարանց» պատմվածքաշար, «Արաքսը պղտորվում է», «Վեց գիշեր», «Մեռածները հրամայում են», վիպակներ, «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Մխիթար Սպարապետ», «Շուշի», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ», «Թագուհին Հայոց» վեպեր: Այս ստեղծագործություններում բավական լայն են տարածաժամանակային ընդգրկումների սահմանները՝ Հայոց պետականության ստեղծման նախապատմական և միաստվածության կայացման, 5-րդ և 18-րդ դարերի հոգևոր մաքառումների և ազգային-ազատագրական պայքարի շրջաններ, Եղեռնի ահասարսուռ իրադարձություններ, 1918-1920-ական թվականներին Արցախում և Զանգեզուրում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտեր:

Ամենահատկանշականն այն է, որ բոլոր այս ստեղծագործություններում, որ Սերո Խանզադյանը պատմությունը ներկայացնում է որպես շարունակական շարժընթաց, լուսաբանում ներկայում ունեցած ներքաղաքական և մշակութաբանական հետագծի համապատկերում:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել պատմության շարունակականության ընկալումները «Մխիթար Սպարապետ» վեպում: Առաջադիր խնդիրներն են՝

1. Թարմացնել աշակերտների պատմական հիշողությունը՝ զուգահեռներ անցկացնելով նախորդ դասարաններում արդեն անցած պատմավեպերի միջև։
2. Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Գոհարի, Սաթենիկի և մի շարք ուրիշ առանցքային կերպարների միջոցով աշակերտների մեջ ամրապնդել հայրենասիրական ոգին։
3. Նպաստել, որ աշակերտները «Մխիթար Սպարապետ» վեպից քաղեն հետագա ողջ կյանքի համար խիստ անհրաժեշտ և ուսանելի դասեր, որովհետև այսօրվա աշակերտներն են վաղը համլրելու Հայոց բանակի շարքերը, անառիկ են պահելու մեր սահմաններն ու հոդս են ցնդեցնելու մեր քոչվոր հարևանների բոլոր նկրտումները։

Բովանդակություն

«Մխիթար Սպարապետ» վեպը լույս է տեսել 1961 թվականին, երբ անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո գրական-գեղարվեստական զարգացումները մտան նոր՝ բնականոն հուն.գրականություն վերադարձավ տասնամյակներ շարունակ այնտեղից արհեստականորեն դուրս մնացած անհատը՝իր հոգսերով, մտահոգություններով, դրամատիկ ապրումներով։ Հաղթահարվեցին նախորդ տասնամյակներում գրականության մեջ ամրագրված կարծրատիպերը, արմատապես փոփոխվեցին գրողների՝ պատմության հայեցակարգի վերաբերյալ պատկերացումները։ Եվ եթե մինչև 1950-ականների կեսերը նախկին խորհրդային գրականության մեջ պատմական շարժընթացը ներկայացվում էր որպես դասակարգային պայքարի պատմություն, ապա «Ձնհալի» տարիներին ու հետագա տասնամյակներում, պայմանավորված պատմության նկատմամբ համաժողովրդական հետաքրքրության բարձրացմամբ, «հասարակական հոգեբանության մեջ կազմավորվող տեղաշարժերով, ժամանակ-կապի վերականգնման սրացումներով»[1], «պատմությունը, պատմական արմատները բառացիորեն իշխեցին 1960-1970-ականների գրական մտքի վրա»[2]։

«Ձնհալի» հենց առաջին տարիներին «ճակատային գրոհ» սկսվեց այն ուղղություններով, որտեղ ճնշումն ավելի դաժան էր եղել անհատի պաշտամունքի տարիներին։ 1950-ականների վերջերին և 1960-ականներին լույս տեսան հայ ժողովրդի պատմական անցյալին նվիրված տասնյակ վեպեր ու վիպակներ (Ստ. Զորյան «Վարազգդատ», Ս. Այվազյան «Իսրայել Օրի», Գ. Մահարի «Այրվող այգեստաններ», Զ. Դարյան «Արծիվ

[1] Петров С., Русский советский историческии роман,М.,1980.

[2] “Вопросы литературы” М., 1980, #7, стр.60

Վասպուրականի», Ս. Այվազյան «Ճակատագիրն հայոց», Ստ. Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին», Հր. Քոչար «Նահապետ», «Սպիտակ գիրք» և այլն)։ Գ. Մահարու արտահայտությամբ «ճակատային գրոհը» շարունակվեց հետագա տասնամյակներում (Հ. Խաչատրյան «Էրեբունի», «Տիգրան Մեծ», Պ. Զեյթունցյան «Արշակ Երկրորդ, Վ. Գրիգորյան «Դար կորստյան» և այլն)։

Գրողների գերխնդիրը «մշակութային սեփական անձնագրի ստեղծումն էր, անվերջ փոփոխվող քարտեզի վրա մեր հասցեի ամրագրումը, «հայոց անվախճան հույսի, հավերժորեն վերամիավորվելու և ընդհատված պատմությունը նորից ու նորովի սկսելու ազգային առանձնահատկությունը, որն ի վերջո դառնում է ազգային ճակատագիր»[3]։

Մեր գրողների առաջադրած հարցն ամենևին չի վերաբերում ոչ ուրիշներին հակադրվելուն, ոչ էլ ինքնամեկուսացմանը։ Ըստ էության փիլիսոփայական առումով մենք խնդիր չունենք մեր ինքնությունը հաստատելու, ինչպես մեր հարևանները, որոնք մոլորվել են թուրք կամ աղվան երկընտրանքի միջև»[4]։

«Մխիթար Սպարապետ» վեպը թեպետ լույս է տեսել 1961-ին, սակայն գրողն այն հղացել է Մեծ հայրենականի տարիներին. «Իմ ռազմա-ճակատային տետրակների մեջ մնացել է քառասուներկու թվականին արված մի գրառում, որտեղ նշված են Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ, Թորոս Իշխան և այլ անուններ։ Դրանք ինձ հիշեցնում են, որ տակավին Վոլխով գետի ափին՝նեղ պլացդարմում, թշնամու կրակային կետից յոթանասուն-հարյուր մետր հեռավորության վրա, ես մտահղացել եմ վեպ գրել այդ թեմայով՝հայ ժողովրդի ազատագրական պայքարի թեմայով՝ ընդդեմ թուրք նվաճողների, որ այդքան չարիք են պատճառել մեր ժողովրդին։ Հայտնի է, որ ֆաշիստական Գերմանիային այս կամ այն կերպ օգնում էր Թուրքիան։ Գուցե հին թշնամուն ակտիվացումն էր , որ ևս անդրադառնում էր հենց այդ՝ 18-րդ դարի առաջին քառորդի հայ ժողովրդի կյանքին, այն պատերազմներին, որ մղում էր հայ ժողովուրդը թուրք հարստահարիչների դեմ։ Ավելացնեմ, որ Մխիթարյան ժամանակաշրջանը հոգեբանորեն խիստ համընկնում էր Հայրենական պատերազմի հետ»[5]։

Վեպը գրելուց առաջ Ս.Խանզադյանը կատարել է հսկայածավալ աշխատանք.ծանոթացել է Լեոյի, Ռաֆֆու, Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրություններին, մեծ քանակությամբ նյութեր է հավաքել

[3] Քալանթարյան Ժ., Ժամանակակից հայ արձակի վիճակն ու խնդիրները, «Գրական թերթ», 2 014, թ.16

[4] Նույն տեղում։

[5] Խանզադյան Ս., Կենսամատենագիտություն, Եր., 1985, էջ 2 9

Սյունիքում, գրի է առել ավանդապատումներ, զրույցներ. «Հետազոտական և բանահավաքչական աշխատանքը, Սյունիքի, Արցախի տարածաշրջաններում մարդկանց հետ հանդիպումներն էապես նպաստել են, որ գրողը հիմնավորված փաստարկված կերպով ներկայացնի 18-րդ դարի առաջին քառորդի իրադարձությունները, ստեղծի դարաշրջանին բնորոշ կերպարներ, կոլորիտային հյութեղ պատկերներ»[6]:

Վեպի առաջին մասի գլխավոր հերոսը Դավիթ Բեկն է, ով գալով Զանգեզուր, համախմբում է տեղի ցաքուցրիվ ուժերը, Ավան Յուզբաշու գլխավորած արցախյան զորագնդերի հետ հաջող մարտեր մղում Օրդուբադի, Նախիջևանի, Բարգուշատի խաների դեմ, գրավում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հենակետեր, ստեղծում Հալիձոր կենտրոնով հայկական իշխանություն, որը ճանաչվում է պարսից շահ Թամազի կողմից:

Դավիթ Բեկի մահվանից հետո ազատագրական պայքարը Մխիթար Սպարապետի գլխավորությամբ շարունակվում է նոր թափով, ընդգրկում նոր տարածաշրջաններ:

Վեպի գաղափարական բովանդակության ընկալման համար բանալի կարող են հանդիսանալ Մարաղայի ճակատամարտից առաջ Դավիթ Բեկի մտորումները. «Վաղը Մարաղայի դաշտում կորոշվի հայոց մի փոքր աշխարհի բախտը: Կընկնեն իրար հետ տաք-տաք վիճող այս զորապետերից շատերը: Կընկնեն, բայց չեն ընկճվի թշնամու ահից: Այստեղ պետք է խորտակիչ հարված տալ թշնամուն: Եթե նույնիսկ կատարյալ չլինի հաղթանակը, այնուամենայնիվ, նորից ահուդող կգցեն թշնամու սիրտը: Ով կենդանի մնա, նա ականատես կլինի վերջին: Վերջի՞ն, թե՞ սկզբին: Որտե՞ղ է վերջը: Սկիզբը եղավ, վերջը՝ ոչ, չի երևում: Կապրեն այդպես կռվելով, ազգովի դիմագրավելով այն արհավիրքին, որ դարեր շարունակ գալիս է Հայոց աշխարհի վրա: Կդիմադրեն բոլորը՝ սերնդեսերունդ մինչև մի տեղ կվերջանա արհավիրքը: Այդպես է եղել ի սկզբանե «ճանապարհն Հայոց»[7]:

Տարբեր ճակատամրտերում, ինչպես կանխազգում էր Դավիթ Բեկը, ընկնում են շատերը, բայց ... «նոր կտրիճներ են աշխարհ գալիս Սյունիքում և նոր աղջիկներ: Նրանք նոր ծաղիկներ են տանում ռամիկ զորականի շիրիմին: Նոր թշնամիներ են գալիս հայոց աշխարհի վրա, ու նոր քաջեր են դուրս մղում նրանց իրենց հինավուրց հողից: Մի սերնդին փոխարինում է նորը (577):

---

[6] Դավթյան Հ., Ժամանակը և տարածությունը Սերո Խանզադյանի պատմավեպերում, Եր., 2 015, էջ 2 1

[7] Խանզադյան Ս., Երկերի ժողովածու 6 հատորով, հ.2 , Եր.,1981, էջ 164:

Սերո Խանզադյանը վեպում ներկայացնում է ազատագրական պայքարի երկու շրջան։ Երկրորդը՝ մխիթարյան շրջանը, սկսում է այն պահից, երբ Մխիթար Սպարապետը երդվում է Դավիթ բեկի աճյունի առջև. «Երդվում ենք քո սուրբ աճյունի առջև, մեր բախտի աստղ, Դավիթ Բեկ, որ մինչև վերջին շունչը կկռվենք Հայոց աշխարհի փրկության համար։ Երդվում ենք ... Ոչ մի օտար ոտք չի մոտենա քո սուրբ գերեզմանին»(516)։

Ժամանակը Մխիթարին, ով շատ բան է ժառանգել Դավիթ Բեկից, «թելադրում է թշնամու դեմ պայքարի նոր ռազմավարություն ու մարտավարական նոր ձևեր ու եղանակներ։ Նրա համար ամենակարևորը ժամանակի գործոնն է, որից ելնելով էլ նա որոշումներ է ընդունում, խորհրդակցում մելիքների ու հարյուրապետների հետ, գործում կամ Դավիթ Բեկի նախաասիրած ձևերով, կամ էլ առաջարկում անսպասելի լուծումներ։ Իդեալական գործողությունների ողջ ընթացքը պայմանավորված է հենց այդ գործոնով»[8]։

Մխիթարը Դավիթ Բեկից ժառանգել է սառնասրտություն, կոնֆլիկտները հաղթահարելու հմտություններ, հեռատեսություն ու լավատեսություն։ Ներքուստ փոթորկուն, արտաքուստ՝ հանդարտ Մխիթարը, «ճիշտ է, չունի Դաավիթ Բեկի մտահորիզոնի լայնությունն ու գիտելիքների մեծ պաշարը, ծանոթ չէ անտիկ աշխարհի ու հայ փիլիսոփայական մտքի նվաճումներին, բայց քաղաքականության ու դիվանագիտության մեջ ավելի պրակտիկ է և այդ փորձը ձեռք է բերել ժողովրդական ակունքներից»[9]։

Սյուժետային հետաքրքիր զարգացումներից են Մխիթար-Սաթենիկ-Գոհար հարաբերությունները։

Մխիթարը պատանեկան հասակից սիրում է Գոհարին, սակայն Դավիթ Բեկի կամքով ամուսնացել է Արցախի Հասան-Ջալալի տոհմի հայտնի իշխանադստեր հետ։ Անչափ ծանր են թե՛ Մխիթարի, թե՛ Սաթենիկի, թե՛ Գոհարի հոգեկան տառապանքները։ Սաթենիկը գիտի, որ Մխիթարը սիրում է Գոհարին, և որ այդ սերը փոխադարձ է, բայց միշտ հավատարիմ է մնում Մխիթարին, դառնում է իր ժամանակի տարեգիրը, մանրամասնորեն գրի է առնում ազատագրական պայքարի բոլոր կարևոր դրվագները։ Նա,ինչպես վեհանձն կերպով ապրեց, նույնպես էլ վեհանձն կերպով կնքում է իր մահկանացուն։

---

[8] Դավթյան Հ., Ժամանակը և տարածությունը Սերո Խանզադյանի պատմավեպերում, էջ 39։

[9] Նույն տեղում, էջ 41։

Հերոսական կերպար է Գոհարը, ով հրաշքներ է գործում Մարաղայի ճակատամարտում, Հալիձորի պաշտպանության ժամանակ: Նրան լավագույնս է ներկայացնում Մխիթարին սպանող հարազատ եղբորն ու նրա ընկերներին նրանց Արաքսի ալիքների մեջ նետելը. «Լսեցեք, ազգուրաց թշնամիներ: Ես ձեզ նետում եմ այս ամեհի գետը, որպեսզի ոչ մի երկրի հող չունենաք ձեզ վրա: Ապա այս պատիժն եմ նշանակում ձեզ, որպեսզի ամեն մի հայ, որի մտքով կանցնի դավաճանել հայրենիքին, հիշի այս կամուրջը ու ձեզ, ահ ունենա ու ետ կանգնի կործանիչ ճանապարհից: Թող հայ ժողովրդի անեծքը ծանրանա ձեր ապականված հոգիների վրա (776):

Աշակերտների համար մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել Միհրան հարյուրապետի, Թովմայի, Փոքր Գորգիի, վարպետ Վրթանեսի, ինչպես նաև Տեր Ավետիսի ողբերգական կերպարները: Վերջինիս կերպարն ուսուցողական է այն առումով, որ Ս. Խանզադյանն այդ կերպարով փաստում է այն ճշմարտությունը, թե երբեք չի կարելի վստահել թուրքին, հավատալ նրա կեղծ խոստումներին ու երդումներին:

Վեպի ուսուցումը դպրոցում կարևոր է այն առումով, որ աշակերտները պատկերացում կկազմեն մեծ տերությունների «ժողովրդավարկան» խաղերի մասին: Օգտակար կլինի վեպից աշակերտներին ներկայացնել Անգլիայի՝ Թուրքիայում դեսպանի խորհուրդը սուլթանին. «Տիրիր հարուստ Հայաստանին և Վրաստանին, սուլթան Ահմեդ, մենք քո թիկունքին ենք: Ո՞վ կարող է քո մի մազին դիպչել: Տիրիր, մի թույլ տուր, որ ռուսները մտնեն այդ երկրներ (412):

Դժվար չէ նկատել, որ իրադարձությունները համարյա նույնությամբ կրկնվում են... Պատմությունը շարունակվում է, հին թշնամիներին նորերն են փոխարինում, գերտերությունների հովանավորությամբ մեր քոչվոր հարևանները փորձում են կյանքի կոչել հին ծրագրերը:Բայց նոր քաջորդիներ են աշխարհ գալիս, և, անտարակույս է, որ այս անգամ էլ հօդս են ցնդելու մեր թշնամու հույսերը:

Եզրակացություն

Ի՞նչ եզրահանգումներ կարելի է անել «Պատմության շարունակականության սերոխանզադյանական ընկալումները «Մխիթար Սպարապետ» վեպում (Օգնություն ավագ դպրոցի ուսուցիչներին) թեմայի ուսումնասիրության արդյունքում՝

1. Իր ստեղծագործական ճանապարհի տարբեր հանգրվաններում Ս. Խանզադյանն անդրադարձել է նաև Հայոց պատմության տարբեր շրջաններին՝ սկսած պետության կազմավորման, միաստվածության կայացման շրջաններից մինչև Հայոց մեծ եղեռնի,1918-1920-ական թվականներին Զանգեզուրում և Արցախում տեղի ունեցած իրադարձություններ:

2. Պատմության թեմայով գրված ստեղծագործությունների գլուխգործոցն, անկասկած, «Մխիթար Սպարապետ» վեպն է, որը հայ պատմավիպասանության, ինչու չէ, նաև նախկին խորհրդային գրականության բարձրարժեք պատմավեպերից մեկն է:
3. «Մխիթար Սպարապետ» վեպում ամբողջանում են պատմության շարունակականության սերոխանզադյանական ընկալումները, բացահայտվում են ժամանակ-հասարակություն, ժամանակ-հերոս փոխադարձ կապերը:
4. Վեպի՝ արդի մանկավարժական մտքի պահանջների լույսի ներքո ուսուցման կազմակերպումը հայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակ կարող է հանդիսանալ մեր օրերում:

Лилит Бабаян

“Взглядах Серо Ханзадяна о преемственности истории в романе “Мхитар Спарапет”
(помощь учителям старшей школы)

Резюме

Какие выводы можно сделать по результатам исследования темы о “Взглядах Серо Ханзадяна о преемственности истории в романе “Мхитар Спарапет”(помощь учителям старшей школы):

1. Серо Ханзадян на разных этапах своего творческого пути обращается также к разным периодам армянской истории, начиная от эпохи формирования государства и становления единобожия до Геноцида армян, событий 1918-1920-х гг. в Зангезуре и Арцахе.
2. Роман «Мхитар Спарапет» несомненно является лучшим произведением, написанным на историческую тему, который является одним из значительных исторических романов в армянской исторической прозе, да и в литературе советского периода.
3. В романе «Мхитар Спарапет» обобщаются представления Серо Ханзадяна о преемственности истории, раскрывается взаимосвязь между временем и обществом, героем и его эпохой.
4. В свете требований современной педагогической мысли организация обучению романа может стать лучшим образцом патриотического воспитания в наши дни.

Lilit Babayan

“Sero Khanzadyan's views on the continuity of history in the novel “Mkhitar Sparapet”
(in order to help high school teachers)

Summary

Conclusions that can be done from the research results on the topic of “Sero Khanzadyan's views on the continuity of history in the novel “Mkhitar Sparapet” (in order to help high school teachers):

1. Sero Khanzadyan at different stages of his creative path also refers to different periods of Armenian history from the era of the formation of the state and the formation of monotheism to the Armenian Genocide, events of the 1918-1920s in Zangezur and Artsakh.
2. The novel "Mkhitar Sparapet" is undoubtedly the best work written on a historical theme, which is one of the significant historical novels in Armenian historical prose and in the literature of the Soviet period.
3. The novel "Mkhitar Sparapet" summarizes Sero Khanzadyan's ideas about the succession of the history, reveals the relationship between time and society, the hero and his era.
4. In the light of the requirements of modern pedagogical thought the organization of the novel's teaching can become the best example of patriotic education.

Խմբագրություն է ուղարկվել 28. 08. 2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 14. 09. 2022թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.